ԼԵՎՈՆ ԼԻՍԻՑՅԱՆԸ ՄԱՅԻԼՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԳԻՏԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ ՄԱՍԻՆ

Գիտնական-հայագետ, հասարակական գործիչ, Էջմիածնի Մատենադարանի ե-բախտավոր, վաղամեռիկ Լևոն Լիսիցյանը (1892–1921) XX դարի 10-ական թվա-կանների 2-րդ կեսի հայ իրականության աչքի ընկնող գործիչներից է: Հայրենիքի համար ծանր, տագնապալի օրերից՝ 1914 թ. հուլիսից, նա եղել է իր ժողովրդի հետ. կամավորական շարժման հենց սկզբից՝ շարքային զինվոր էր, հայ փախստա-կաններին եղբայրական օգնության կոմիտեի լիազոր ներկայացուցիչ, մշակութա-յին արժեքների անխոնջ պահապան, «Համաշխարհային պատերազմում հայ ժո-ղովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» ռազմապատմական բաժնի պա-տասխանատու քարտուղար, Մայիլյան եղբայրների կազմակերպած գիտատնտե-սական արշավախմբի ակտիվ աշխատակից[1]:

Հայտնի է, որ Առաջին Հանրապետության ստեղծումը բուռն ոգևորություն ա-ռաջ բերեց աշխարհասփյուռ հայության շրջանում. յուրաքանչյուր ոք աշխա-տում էր ներածին չափով օգնել հայրենիքի հոգևոր և տնտեսական վերածննդի գործին[2]: Վերջիններիս թվում էին նաև բաքվաբնակ մեծահարուստ ձեռնարկա-տերեր Մայիլյան եղբայրները՝ Եղիան, Դանիելը և Հովհաննեսը: Ժամանակին նրանք հայտնի էին իրենց բոլորանվեր ազգօգուտ բարեգործությամբ: 1919 թ. սկզբներին իրենց նյութական միջոցներով նրանք ստեղծում են մի կազմակեր-պություն, որն անվանվում է «Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական ար-շավախումբ»: Նախքան հայրենիքում որոշակի գործունեություն ծավալելը, ար-շավախումբը աշխատում է բազմակողմանիորեն ճշտել հայ ժողովրդի նյութական և հոգևոր ներուժի առկայությունն ու հնարավորությունների շրջանակները: Ար-շավախմբի ստեղծումը և նրա ձեռնարկած առաջին քայլերն արդեն իսկ լայն ար-ձագանք են գտնում ոչ միայն հայ հասարակայնության ամենատարբեր շերտե-րում[3]: Մի շարք հայտնի հանգամանքների պատճառով, սակայն, Մայիլյան եղ-բայրների ֆինանսական հնարավորությունները պակասում են և, ըստ այդմ էլ, արշավախմբի աշխատանքները նախ դանդաղում, ապա դադարում են:

Լ. Լիսիցյանի ստորև հրապարակվող հաղորդումը արշավախմբի ստեղծման, նրա առջև դրված խնդիրների և նպատակների, կատարված աշխատանքի մասին ուշագրավ ամփոփ տեղեկատվություն է: Այն պահվում է ՀՀ պատմության պե-տական կենտրոնական արխիվում (ֆ. 428, ց. 1, դ. 75, թ. 1–8: Բնագիր: Ձեռա-գիր):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

---

1 *Լ. Լիսիցյանի մասին տե՛ս* Գ. Բ. Ղ ա ր ի բ ջ ա ն յ ա ն, Լ. Մ. Վ ա ր դ ա ն - յ ա ն. Լևոն Լիսիցյան (1892–1992).– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1993, №1, էջ 53–58:

2 *Մանրամասն տե՛ս* В. А. М и к а е л я н, С. С. М и р з о я н. Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX – первые десятилетия XX вв.).– «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, №2, էջ 74–81:

3 *Տե՛ս* Ан. З а к а р я н. Поэт-генерал Александр Кулебякин и Армения.– «Պատմա-բանասիրական հանդես», 2001, №2, էջ 126:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ «ՄԱՅԻԼՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՌ 1-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1920 ԹՎԻ

Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական Արշավանքը ի Հայաստան կազմակերպվել է 1919 թվի մարտ ամսին Հյուսիսային Կովկասում (Կիսլովոդսկ), Մայիլյան եղբայրների նախաձեռնությամբ ու միջոցներով և նպատակ ունի՝ Հայաստանի ու հարևան երկիրների ժողովրդական-տնտեսական կյանքի կարելվույն չափ բազմակողմանի ուսումնասիրությունը (ծրագիրը՝ տես Հավելված № 1):

Ճանապարհների փակ լինելու պատճառով, Արշավանքը ստիպված է եղել մինչև մայիս մնալ Հյուսիսային Կովկասում, և սահմանափակվել է՝ իր աշխատանքների ընդհանուր ծրագրի ու ստորև հիշված «Հարցացուցակի» մշակությամբ:

Հունիս ամսին միայն հնարավոր եղավ Անդրկովկաս, Թիֆլիս անցնել՝ գեպի Հայաստան ճանապարհը շարունակելու համար: Սակայն այստեղ, Հայաստանի ապրած տնտեսական և քաղաքական ծանր պայմաններին ծանոթանալով և տեսնելով, որ անկարելի է՝ ծրագրած եղանակով աշխատանքներին անմիջապես ձեռնամուխ լինել, Արշավանքը ստիպված եղավ համապատասխան կերպով փոփոխել իր գործունեության ուղղությունը: Անհրաժեշտ էր երկրի անմիջական հետախուզությունը հետաձգել ավելի բարենպաստ ժամանակի և կանգ առնել Հայաստանի ուսումնասիրությանը վերաբերող գրական նյութերի հավաքման և լայն կերպով օգտագործման վրա: Այս աշխատանքը՝ Անդրկովկասի նախկին մայրաքաղաքում՝ Թիֆլիսում, ուր կենտրոնացած են եղել բոլոր բարձրագույն վարչական, գիտական և այլ հիմնարկությունները, հնարավոր էր գյուրությամբ կատարել Թիֆլիսում, Անդրկովկասի նախկին մայրաքաղաքում, ուր կենտրոնացած էին հեղափոխությունից առաջ բոլոր բարձրագույն թե՛ վարչական, թե՛ գիտական հիմնարկությունները՝՝:

Օգտվելով Թիֆլիսում հայկական գիտական հաստատությունների գոյությունից՝ ինչպես Գյուղատնտեսական, Տեխնիկական, Բժշկական և այլ ընկերություններ, և ցանկանալով հասարակական հսկողության ներքո առաջ տանել իր՝ համապետական նշանակություն ունեցող պարապմունքները, Արշավանքը նախ և առաջ հիշյալ ընկերությունների հետ միասին քննության ենթարկեց իր գործունեության ծրագիրը:

Այս ընկերությունների կողմից հավանություն գտավ թե՛ այս ծրագիրը և թե՛ Հայաստանի ուսումնասիրության համար կազմված մանրամասն «Հարցացուցակը», որի հայերենը արգեն տպված է և որով այժմ փախստականները հարցուփորձի են ենթարկվում Հայաստանում ժողովրդատնտեսական կյանքի բազմազան խնդիրների մասին:

---

* *Հավելված 1-ը արխիվային նյութին կցված չէ:*

** *Բնագրում այդպես է: Հրապարակման մեջ պահպանել ենք հեղինակի կետադրությունը, մասամբ ուղղագրությունը:*

Արշավանքը բաժանված է առայժմ երեք մասնաճյուղի գյուղատնտեսական, վիճակագրական-տնտեսադիտական և լեռնաերկրաբանական, որոնց գլուխ անցած են Կոլեգիայի անդամ-մասնագետները: Ունի նաև կից բաժանմունքներ՝ բժշկաառողջապահական և քարտեղագծագրական:

Գյուղատնտեսական մասնաճյուղը մշակել է արդեն երկրի գյուղատնտեսության մի շարք հարցեր (տես՝ Հավելված № 2):

Վիճակագրական-տնտեսադիտական մասնաճյուղը մեծ մասամբ ավարտել է արդեն Կովկասահայաստանի տնտեսական դրության ուսումնասիրությունը պատերազմի նախընթաց շրջանում, հավաքելով տվյալներ՝ երկաթուղային ապրանքատարության, ներմուծման և արտահանման, հարևան պետությունների և երկիրների հետ եղած փոխանակության մասին ևն: Երկրի տնտեսությունը բնորոշելու համար այս կարևոր աշխատանքներից արդեն տպվում են՝ հացի փոխադրության վերաբերյալ նյութերը, իսկ մյուսները, Արշավանքի այլ աշխատությունների հետ միասին, պիտի հրատարակվեն հետզհետե առանձին պրակներով: Բացի այս, մասնաճյուղը մշակել է բազմաթիվ թվական նյութեր Ռուսա- և Տաճկահայաստանի ազգաբնակչության, հողագիտության և մշակության, գյուղատնտեսական տեխնիկ արտադրությունների, անասնապահության, առևտրի, արդյունաբերության և այլ (տես՝ Հավելված № 2):

Լեռնաերկրաբանական մասնաճյուղը պատրաստել է մի շարք տեղեկագիրներ ու զեկուցումներ Հայաստանի բնական հարստությունների քննության և շահագործման մասին (տես՝ Հավելված № 2):

Բժշկաառողջապահական բաժինը պատրաստել է Հայաստանի մանրամասն բժկաառողջապահական տեսությունը և զեկուցումներ՝ Հայաստանում դեղաբույսերի քաղի, մթերման և մշակման մասին, ծրագիր՝ վայրենի դեղաբույսերի քաղը կազմակերպելու, և՝ Հայաստանում դեղագործություն կազմակերպելու մասին:

Բացի այս՝ Արշավանքը հանձնարարել է կատարել մի շարք մենագրական ուսումնասիրություններ մասնագետների՝ բուսաբանության, կենդանաբանության, սունկաբանության (միկոֆլորա), միջատաբանության (էնտոմոլոգիա), լեռնագրության և ջրագրության, բժշկական տեղագրության և բժշկական վիճակագրության, Հայաստանի աշխարհագրության և մշակույթի մասին: Այս աշխատությունները հետզհետե պիտի հանձնվեն Արշավանքին 1–3–5 ամսից հետո:

Կան արդեն պատրաստի ուսումնասիրություններ՝ Արագածի աշխարհագրական տեսությունը, Հայաստանի ջրային ուժերի մասին, հետազոտություն Հայաստանի միջատների մասին: Հնության հիշատակարանների վերաբերյալ, հայտնի ճարտարապետ Թ. Թորամանյանին հանձնված է Էջմիածնի մոտ գտնվող հռչակավոր Զվարթնոց տաճարի ուսումնասիրությունը:

Բացի վերոհիշյալ աշխատանքներից, Կոլեգիան գործել է և այլ ուղղությամբ: Ուսումնասիրելով երկրի կենսական պահանջները և հնարավորություն չունենալով հանձն առնել այս կամ այն զուտ պետական բնույթ կրող խնդիրների գործնական լուծումը, Արշավանքը իր բարոյական պարտքն էր համարում իր ուժերի չափ օգնության գալ Կառավարությանը

և զբաղվել է մի շարք հարցերի մշակությամբ, որոնց մասին կազմվել են հանգամանորեն զեկուցումներ և ներկայացվել են Հայաստանի կառավարությանը Արշավախմբի անդամների միջոցով: Այս տեսակ աշխատանքների շարքին են պատկանում հետևյալ զեկուցումները՝ Հայաստանի անտառների ուսումնասիրությունը՝ անտառային կանոնավոր տնտեսությունը և անտառապահական օրենքները մշակելու համար: Զեկուցում՝ Տնտեսական Խորհրդի, իբրև մի համապետական հիմնարկության, և՝ Կենտրոնական Վիճակագրական Կոմիտեի կազմակերպության մասին: Զեկուցում՝ Հայաստանի հանքային վառելանյութերի (քարածուխ, տորֆ) և նրանց շուտափույթ շահագործման անհրաժեշտության մասին:

Երևան իր ուղարկած անդամներին Արշավախումբը հանձնարարել է՝ ծանոթացնել Կառավարությանը իր գործունեության հետ և կապ հաստատել՝ իր աշխատանքները համակերպելու Կառավարության նպատակներին և մտագրություններին, թե՛ օրենսդրական և թե՛ վարչական՝ երկրի ժողովրդատնտեսական կյանքը կանոնավորելու համար:

Ընդարձակ գիտական նյութեր Հայաստանի ժողովրդատնտեսական կյանքի զանազան կողմերի մասին ժամանակին ներկայացվել են գեն. Հարբորտի միսիային, ի պատասխան նրա հարցումներին:

Բացի այդ, Արշավանքի ժողոված ու մշակած նյութերից ուղարկվել է նաև Փարիզ, Ամերիկա և այլուր:

Ներկայիս Արշավանքը մշակում է Հայաստանի ազգաբնակչության ներգաղթի և տեղավորման հարցերը: Սրանք առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրներ են, այնինչ մինչև հիմա տակավին շատ քիչ է արված նրանց ուսումնասիրության ու մշակության համար ինչպես Կառավարության, այնպես էլ մասնավոր հիմնարկությունների կողմից: Արշավախումբը որոշել է այս խնդիրն իր վրա կենտրոնացնել այժմ իր դլխավոր ուշադրությունը***: Այս րոպեիս ուսումնասիրվում են այս հարցերի պատմական և տեսական կողմերը, քարտեզագրական բաժնում պատրաստվում են քարտեզներ՝ ազգաբնակչության, կլիմայի, գետնի (հողի), դիագրամաներ ևն:

Ազգաբնակության ներգաղթի և տեղավորման խնդիրներին նվիրված իր աշխատանքները մի որոշ գիտական վերահսկողության ենթարկելու համար և մյուս կողմից՝ նպատակ ունենալով հնարավոր եղածին չափ լայն օգտագործել տեղական գիտական ուժերն ու հաստատությունները, Արշավանքը մտագիր է ստեղծել կից մի մնայուն խորհրգակցական մարմին, մյուս հայկական գիտական ընկերությունների ներկայացուցիչներից և ձեռնհաս անձնավորություններից:

Այսպիսով, Հայաստանի գրության բարելավումը ակնկալելով, Արշավանքը, նախքան քիչ շատ տանելի պայմաններ կստեղծվին երկրի մեջ տեղնուտեղը հարցերը անմիջապես ուսումնասիրելու համար, ստիպված է առայժմ՝ վարել իր աշխատանքները վերոհիշյալ ուղղություններով և ժողովել ու մշակել դիտության և գրականության մեջ եղած նյութերը, և

*** Բնագրում այդպես է:

այն նյութերը, որ կարելի է ստանալ փախստականների կանոնավոր հարցուփորձով:

Ի վերջո, ավելորդ չենք համարում ընդգծել, որ Արշավախումբը աչքից բաց չէ թողնում ուրիշ թե՛ տեղական և թե՛ արտասահմանյան գիտական ուժերի և հասարակական կազմակերպությունների հետ մշտական կապ պահպանելու կարևորությունը և ձգտում է տալ իր աշխատանքներին լայն հասարակական բնույթ:

Թվում է, որ այս տեսակ ուղղությունով պետք է բացատրել այն կենդանի հետաքրքրությունը, որ նկատվում է դեպի Արշավանքի պարապմունքները ինչպես հասարակության տարբեր շրջաններում, այնպես էլ մամուլի մեջ և այն բարձր գնահատությունը, որին նա արժանացել է Կառավարության և դեն. Հարբորտի կողմից:

Հավելված № 1. Արշավանքի նպատակներն ու ծրագիրը****:
№ 2. Նյութեր ժողովված և մշակված:
№ 3. Ընթացիկ աշխատանքներ:

Հավելված № 2 — Մայիլյանների եղբայրների գիտական-տնտեսական Արշավանքի ի Հայաստան — ժողովված և մշակված նյութերը

I Ազգաբնակչություն (թվական նյութեր)

1. Տաճկահայաստանի ազգաբնակչությունը՝ ըստ ազգության, վիլայեթների, սանջակների ու կազաների (տարբեր աղբյուրներով):
2. Ռուսահայաստանի ազգաբնակչությունը՝ ըստ ազգության, կրոնի, սեռի, հասակի, գրագիտության, ընտանեկան գրության և պարապմունքի:
3. Անդրկովկասի ազգաբնակչությունը՝ ըստ ազգության, կրոնի, սեռի, հասակի, գրագիտության, ընտանեկան գրության և պարապմունքի:
4. Ռուսաստանի այլ վայրերի ազգաբնակությունն և հայերը՝ ըստ սեռի և պարապմունքի:
5. Ծնունդների, ամուսնության և մահացության թվերը:
6. Հայերը՝ ըստ սեռի, գրագիտության և պարապմունքի Բաքու քաղաքի և նրա արդյունաբերական շրջանի մեջ:
7. Աշակերտությունը՝ ըստ ազգության և դպրոցների կարգի 1911–1914 թվականներին Կովկասում ըստ նահանգների:
8. Պարզաբանություն տաճկական պաշտոնական վիճակագրական տվյալների և ազգաբնակչության քանակի և դասավորության մասին՝ ըստ տեղի և ազգության:

**** Տե՛ս ծանոթ. *-ը:

II Աշխարհագրություն, կլիմա և օդերևութաբանություն (մետեորոլոգիա)

1. *Հայաստանի կլիման:*
2. *Կովկասի կլիման:*
3. *Տախտակներ՝ քամիների, ամսեկան և տարեկան տաքությունների, անձրևների և ձյունի, խոնավության և ամպամածության, օդի ճնշումի՝ Երևանի և Կարսի նահանգներում:*
4. *Հայաստանի տեսություն (գլխավորապես Տաճկահայաստանի):*
5. *Հայաստանի աշխարհագրություն:*
6. *Արագածի աշխարհագրական տեսություն:*

III Երկրաբանություն (գեոլոգիա)

Ընդհանուր տեսություններ առայժմ չկան:

Հայաստանի հանքային հարստությունները՝

1. *Ռուսահայաստանի հանքային հարստությունները:*
2. *Տաճկահայաստանի հանքային հարստությունները:*
3. *Հանքային վառելանյութերի աղբյուրների հետախուզության և շահագործման խնդիրը՝*
   ա) քարածուխի հանքեր
   բ) տորֆի հանքեր:
4. *Համառոտ տեղեկագիր՝ Հայաստանի Հանրապետության սահմաններում ապակու գործարան հիմնելու մասին:*
5. *Ծծումբի թթվի, կիրի, ալաբաստրի, աղյուսի և կավե այլ ապրանքների արտադրության մասին Հայաստանում:*
6. *Հայաստանում տորֆի հանքատեղիների հետախուզության և շահագործման մասին:*
7. *Հայաստանի ջրային ուժերը:*
8. *Ռուսահայաստանի լեռնագրությունը (բարձրություններ և ձևավորում), ջրագրությունը, կլիման և հողերի տեսակները:*

IV Գյուղատնտեսություն

Թվական նյութեր 1909–1913 թվերի Ռուսահայաստանում՝ Վրաստանի և Ադերբեյջանի բաղդատությամբ:

Ա. Հողագիտություն Երևանի և Կարսի նահանգներում: Կալվածների տարածությունը:

Բ. 1. Ցանքսերի տարածությունը՝ ըստ առանձին բույսերի մշակությունների (բույսերի), առանձին թանկագին մշակությունների համար:
   2. Մի դեսյատինի ցանքսը՝ դաշտային առանձին բույսերի:
   3. Մի դեսյատին բերքը՝ դաշտային առանձին բույսերի:
   4. Միջին ընդհանուր արդյունք դաշտային առանձին բույսերի:
   5. Հացերի (տեսակների) ավելորդություններն ու պակասությունները:

6. Խաղողի այգիների տարածությունը և արդյունքը:

Գ. 1. Տնային անասուններ՝ ըստ տեսակի, սեռի և հասակի:

2. Բոլոր անասունների և առանձին՝ բեռնակիր (բանվոր) անասունների քանակը, մի տան և՝ գյուղացի ազգաբնակչության 100 երկսեռ շնչի համեմատ:

Դ. Գյուղատնտեսական տեխնիկ արտադրությունները Ռուսահայաստանում՝ Վրաստանի և Ազերբեյջանի բաղդատությամբ:

1. Գինեգործություն:
2. Խաղողի գինեգործություն:
3. Կոնյակի արտադրություն:
4. Սպիրտի (ալկոհոլի) մեծաքանակ և մենավաճառքի վայրերը:
5. Սպիրտի արտահանությունը ըստ շրջանների:
6. Սպիրտի սպառումի չափը մարդագլուխ:
7. Մեղրաբուծություն. մեղրի և մոմի ընդհանուր արդյունքը և ծախածի գումարը:
8. Շերամապահություն (մետաքսագործություն):

Ե. Անտառներ: Անտառների դրությունը (տարածության դասավորումը շահագործման տեսակետից):

Ակնարկներ Ռուսա– և Տաճկահայաստանի գյուղատնտեսության մասին՝

1. Անասնապահություն: 2. Երկրագործություն: 3. Հայաստանի գյուղատնտեսական տեսություն և հողի արդյունաբերության բարգավաճումը գործածությամբ և տարածումով մեքենայական տրակտորների: 4. Համայնական աշխատանքների մասին գյուղատնտեսության մեջ:

V Առևտուր, արդյունաբերություն, վարկ

Հայաստանի և սահմանակից պետությունների ու այլ երկիրների տնտեսական հարաբերությունների խնդիրների շուրջը (թվական նյութեր).

Առևտուր

1. Երկաթուղային ապրանքատարություն 1909–1913 հինգամյակի միջոցում, ըստ՝ բոլոր ապրանքների, արտահանության և ներմուծության վայրերի և՝ ըստ կայարանների:
2. Երևանի և Կարսի նահանգների մաքսային հիմնարկությունների մասնակցությունը Պարսկաստանի և Տաճկաստանի հետ ունեցած առևտուրին 1909–1913 հինգամյակի միջոցում:
3. Հայերի մասնակցությունը առևտուրին Թիֆլիսում, Բաքվում և ամբողջ Ռուսաստանում (նահանգներով):

Արդյունաբերություն

1. Երևանի և Կարսի նահանգների գործարաններն:
2. Հայերի մասնակցությունը արդյունաբերությանը Թիֆլիսում, Բաքվում և ամբողջ Ռուսաստանում (նահանգներով):

Վարկ. Երևանի և Կարսի նահանգներում

1. *Մանր վարկ*
2. *Բարելավման վարկ (մելիորատիվ)*
3. *Հողային վարկ:*

VI Հաղորդակցություն

1. *Ռուսահայաստանի ճանապարհների ցանցը.*
   ա) երկաթուղային
   բ) խճուղիներ (շոսսէ) և հասարակ ճանապարհներ
   գ) ճանապարհների ցանցի խտությունը:
2. *Ճանապարհների ցանցը Տաճկահայաստանում:*
3. *Երևանի և Կարսի նահանգների փոխադրության միջոցները (թվական տվյալներ):*
4. *Ռուսա= և Տաճկահայաստանի գոյություն ունեցող և ծրագրած երկաթուղիների տնտեսական նշանակությունը (քարտեզով):*
5. *Հայաստանի (արտաքին և ներքին) ճանապարհների և երկրի պաշտպանության միջոցների մասին:*

VII Բժշկաառողջապահական գործ

Հայաստանի բժշկաառողջապահական տեսությունը, քարտեզներով, դիագրամներով և տախտակներով:

Զեկուցումներ՝ գեղաբույսերի քաղի, մթերման ու մշակման մասին Հայաստանում. ծրագիր՝

վայրի գեղաբույսերի քաղը և մթերումը կազմակերպելու և՝ Հայաստանի Հանրապետության մեջ դեղագործություն կազմակերպելու մասին:

Ընդհանուր

1. *Համառոտ տնտեսական տեսություն Ռուսահայաստանի:*
2. *Հայաստանի աշխարհագրությունն և ազգագրությունը:*
3. *Մեծ Ղարաքիլիսայի տնտեսական հեռանկարները:*
4. *Պարսկահայք:*

Հավելված №3 — Ընթացիկ աշխատանքներ

Մասնաճյուղեր՝

Գյուղատնտեսական և վիճակագրական-տնտեսագիտական

Լեռնաերկրաբանական

1. Հայաստանի տեղագրման և ազդարնակչության ներգաղթի խնդիրների մշակությունը:

2. Հայաստանի աղահանքերի մասին:

3. Քարհանքերի մշակության մասին հանրային աշխատանքների համար:

Քարտեզագրական բաժին	*4. Ազգագրական քարտեզ 1914 թ. տվյալներով:*
	5. Ազգաբնակչության գիագրամներ:
	6. Քարտեզներ հողային և կլիմա<յա>կան:
Բժշկաառողջապահական բաժին	*7. Բժշկատեղագրական և առողջապահական նկարագրություն Հայաստանի զանազան վայրերի (ներգաղթի և ազգաբնակչության տեղավորման հարցերի հետ կապված):*